# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
## ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/7 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք

28 փետրվարի 2020թ. ժամը 12:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ | Գևորգ Հովհաննիսյան |
| Անդամներ | Նորայր Պողոսյան |
| | Արկադիկ Մուրադյան |
| Գնահատող հանձնաժողովի քարտուղար | Բաբկեն Աբրեյան |

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/7 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/7 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող էլեկտրական լարի նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 750 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ Կալիպսե Գալստյան Ա/Ձ-ն (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մնջոյան փող. 8/4, էլ. փոստ՝ kalipsegalstyan@mail.ru) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 500 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը գնահատեց գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

*ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Կալիպսե Գալստյան Ա/Ձ-ին:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 2

*Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից Կալիպսե Գալստյան Ա/Ձ-ի հետ կնքել էլեկտրական լարի մատակարարման պայմանագիր:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

*Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-20/7 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:*

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ ________________ Գևորգ Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ ________________ Նորայր Պողոսյան

________________ Արկադիկ Մուրադյան

Հանձնաժողովի քարտուղար ________________ Բաբկեն Աբրեյան